

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ N 44/2

ք.Երևան

27 հուլիսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ «ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՀՈՒՅՍ» արտադրական կոոպերատիվի դիմում-բողոքը՝

ՊԱՐԶԵՑ

1. Բողոքարկման առարկան, դիմում-բողոքով բերված փաստարկները և ներկայացված պահանջները

«ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՀՈՒՅՍ» արտադրական կոոպերատիվի /ՀՎՀՀ 03527125/ նախագահը (այսուհետ նաև՝ բողոքաբեր) հայտնում է, որ 2012 թվականին «ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՀՈՒՅՍ» ԱԿ-ն լուծարվել է «2008 թվականի հունվարի 1-ի դրությամբ հարկային հաշվետվություններ չներկայացրած կազմակերպությունները լուծարելու և անհատ ձեռնարկատերերին պետական հաշվառումից հանելու մասին» Հայաստանի Հանրապետության 2011 թվականի հունիսի 16-ի ՀՕ-186-Ն օրենքի համաձայն: Սակայն 2018 թվականին դիմել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողով՝ լուծարումը անվավեր ճանաչելու խնդրանքով, որի արդյունքում Հանձնաժողովի կողմից 03.07.2018 թվականի թիվ 38/9 որոշմամբ վերականգնվել է կոոպերատիվի կարգավիճակը և այն դարձել է գործող:

Բողոքաբերը հայտնում է, որ վերը նշվածի հետևանքով շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն սահմանված ժամկետում չի ներկայացվել:

Ելնելով վերոգրյալից՝ բողոքաբերը խնդրում է հնարավորություն ընձեռել, որպեսզի 2018 թվականի ընթացքում գործունեությունը շարունակի իրականացնել շրջանառության հարկի դաշտում:

2. Դիմում-բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

«ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՀՈՒՅՍ» արտադրական կոոպերատիվը լուծարվել է 2012 թվականին «2008 թվականի հունվարի 1-ի դրությամբ հարկային հաշվետվություններ չներկայացրած կազմակերպությունները լուծարելու և անհատ ձեռնարկատերերին պետական հաշվառումից հանելու մասին» Հայաստանի Հանրապետության 2011 թվականի հունիսի 16-ի ՀՕ-186-Ն օրենքի համաձայն:

ՀՀ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովի 03.07.2018թ. թիվ 38/9 որոշմամբ կոոպերատիվի կարգավիճակը վերականգնվել է, այն դարձել է գործող:

«ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՀՈՒՅՍ» արտադրական կոոպերատիվը լուծարման մեջ գտնվելու հետևանքով չի կարողացել սահմանված ժամկետում ներկայացնել 2018թ. շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը:

3. Հիմնավորումներ, պատճառաբանություններ և եզրահանգումներ

ՀՀ հարկային օրենսգրքի 254-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով հստակ սահմանված է, որ շրջանառության հարկ վճարողներ են համարվում (անկախ բացառապես արտո-

նագրային հարկով հարկման օբյեկտ համարվող գործունեության տեսակներ իրականացնելու հանգամանքից) նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված պայմանը բավարարող ռեզիդենտ առևտրային կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները (բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերի) տվյալ հարկային տարվա հունվարի 1-ից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը (բացառությամբ Օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված՝ հարկային տարվա ընթացքում ԱԱՀ վճարող համարվելու դեպքի), եթե հարկ վճարողը մինչև տվյալ հարկային տարվա փետրվարի 20-ը ներառյալ հարկային մարմին է ներկայացրել հարկային մարմնի հաստատած ձևով՝ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ շրջանառության հարկ վճարող կարող են համարվել այն ռեզիդենտ առևտրային կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը և նոտարը, որոնց նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունը չի գերազանցել 58.35 միլիոն դրամը:

Մինևույն ժամանակ, Օրենսգրքի 455-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Օրենսգրքի 59-րդ և 254-րդ հոդվածներով սահմանված՝ նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառության 58.35 միլիոն դրամի շեմը, ինչպես նաև Օրենսգրքի 255-րդ հոդվածով սահմանված՝ ընթացիկ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառության 58.35 միլիոն դրամի շեմը գործում է 2019 թվականի հունվարի 1-ից, իսկ 2018 թվականի ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառության ԱԱՀ-ի շեմը սահմանվում է 115 միլիոն դրամ:

Օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված են այն վավերապայմանները, որոնց առկայության պայմաններում տնտեսվարող սուբյեկտը չի կարող համարվել շրջանառության հարկ վճարող:

Քննարկվող դեպքում «ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՀՈՒՅՍ» արտադրական կոոպերատիվի նախագան լուծարման մեջ գտնվելու հետևանքով չի կարողացել սահմանված ժամկետում ներկայացնել 2018թ. շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը (առկա են համապատասխան հիմքերը):

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է հնարավորություն ընձեռել «ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՀՈՒՅՍ» արտադրական կոոպերատիվին ներկայացնել հայտարարություն՝ 2018թ. ընթացքում շրջանառության հարկ վճարող համարվելու համար:

4. Եզրափակիչ մաս

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հանձնաժողովը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. «ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՀՈՒՅՍ» արտադրական կոոպերատիվի դիմում-բողոքը բավարարել:

2. «ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՀՈՒՅՍ» արտադրական կոոպերատիվի կողմից շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն ներկայացվելու դեպքում վերջինիս 2018թ. համարել շրջանառության հարկ վճարող:

Հանձնաժողովի նախագահ՝



Ռ.ՄԱՇԱԴՅԱՆ